

## Զ Ա Կ Ա. Ր Ճ Ա. Լ Ի Ք

ԲՆԱՅՈՒԹԱԿԱՆ . Կէս գաւաթթ ջրի մէջ պղտի սիսուան շափ փոսփոր գիր ու ամենամանը ջարդելով հողէ ամանի մը մէջ լից ու մաղմաղ կրակի վրայ եռացուր . յետոյ առ երկայն ունեղ շլչ մը որուն բերանը ու խիցը անպատճակվ մաշեցուցած ըլլայ , որպէս զի ամուր գոցուի ու օդ շանցնի . առ շիշը տաք տաք ջրով մէյմը ցօղուելու և առ այդ առջի եռացուցած փոսփորով ջուրը մէջը լեցուր , ու շուտ մը բերանը դոցէ ու խիցն ալ մաղմաքէով օծէ , որպէս զի օդ շմանէ : Աս Կերպով պատրաստուած ջուրը գիշեր առեն լուսաւոր կ'երենայ ու ամիսներով կը գիմանայ : թէ որ բերանը միշտ դոց պահէս . իսկ տաք ու չոր օդերուն ցնցելու որ ըլլան՝ փայլուն կայծեր կ'ելեն առ հեղանիւթէս :

ԽՍԴ . Այլեայլ կար թղթերու վրայ հասարակ թանաքով մէյմէկ հարցմունք գրէ , յետոյ անոնց տակը նոյն հարցմանց պատասխանն ալ գրէ լեմննի կամ սոխի չողվ , որն որ չորցածին պէս բան չերենար : Աս թղթերս ցցուր ընկերութեան , ու անոնցմէ որն որ ընարեն ու պատասխանը ուղեն , իրենց ձեռքովը գնել տուր տուփի մը մէջ ու գոյէ . յետոյ բաց որ պատասխանը որոշ գրած կը գանես ու կը ցուցինես : — Աս բանիս համար տուփին յատակը կամ խուփին մէջ տարցուցած երկթէ կոր թիթեղ մը կայ , որուն չերմութեամբ որոխի ջրով գրածներդ ալ երեան կ'ելեն , իսկ երբ պաղին նորէն անյայտ կ'ըլլան :

Մ Ա Ն Բ Ա Վ Հ Պ . Պրունավերի գուքս մը չամպուրկ քաղքին մէջ քարող մը լսելու համար կ'ելեցին կը մանէ . իրեն մօտ երիտասարդ մ'ալ նստած էր՝ որ համբու զգեստներէն չձանինալով անոր ովլըլըլ՝ արհամարհական կ'երպով մը գքսին վրայ կը նայէր : Ազքասաց գանձանակը պարզոցնելուն ձայնը լսելով գուքսը քսակէն ֆիորին մը հանեց ու գիմացը գրաւ որ գանձանակը իրեն հասնելուն մէջը ձգէ : Գովե նստող անիսէլք երիտասարդը ուղելով իր հարստութիւնն ու առատաձեռնութիւնը ցցունել , հպարտութեամբ հինդ ֆիորինոց տուքաթ մը հանեց քսակէն ու գրաւ առջեկ տուլն վրայ : Խշանն իմանալով անոր միտքը՝ տուքաթ մըն ալ ինքը հանեց գրաւ առջ ֆիորինին վրայ : Երիտասարդը կատղած մէյմ' ալ հանեց . իշխանն ալ ուրիշ մը . այսպէս մէյմը մէկը մէյմը մէկալք աւելցուցին , ինչուան որ գանձանակը իրենց ալ հասաւ , ու առաջ ան երիտասարդին մօտեցած ըլլալով ասիկայ մէկիկ մէկիկ համբեց տասուերկու տուքաթը , կարծելով որ գուքսն ալ որ միշտ մէկով եակ մնացեր էր , մէյմ' ալ աւելցընէ : Բայց ինչպէս խտղք եղաւ՝ երբ տեսաւ որ գուքսը հանած տուքաթները նորէն քսակը գնելով գանձանակին մէջ ձգեց միայն ան առջի հանած ֆիորինը՝ որն որ սահմանէր էր ողորմութիւն տալու :

ԲԵՐՈՑԱԿԱՆ . Աւելի ամօթակի բան է բարեկամաց վրայ վսահութիւն չունենալը՝ բան թէ անոնցմէ խարութիւն :

Խարուելու ձշմարիս միջոցը այն է , որ մէկը ինքզինը ուրիշներէն վարպետորդի սեպէ :

Կեղծաւորութիւնն է վկայութիւն մը զորն որ ախար կու տայ առաքինութեան :

Խշանները այնպիսի առաքինութիւններով գուլ վելուցմէ որ ամեններն զուրկ են՝ անոնց անփառապինքներ գնել է :

Թափանցողութեան մեծ պակասութիւն չնպատակին չշասանիլը , հապա զանիկայ անցնիլը :

Ծառ աւելի օգտակար կ'ըլլար մեղի թէ որ ուրիշներուն ինչ որ ենքնէ այնպէս ձանցընելտայ . ինք , ու չանայինք ծածուկ հնարդներով եղած . ներնէս աւելի երենալ :

Մեծ թշուառութիւնն է աղէկ խօսելու համար քիչ խելք ունենալը , և ոչ բաւական դասմունք՝ պէտք եղած անզը լւելու :

Առաքինի մարդ մ'որ Աս ու Ու կը զրուցէ , կաժէ որ ամենն ալ անոր հաւատան . անոր բնաւորութիւնը վկայ կ'ըլլայ , խօսերուն հաւատար . մութիւն կու տայ , ու ամենուն վստահութիւնը իրեն կը քաշէ :

Աւելի աղէկ է ապերախտութիւնը յանձն առ . նուշ՝ քան թէ թշուառութեան ձեռք չտալ :

Աւելի պէտք է անոնց յաջողութեանը փափագիլ որն որ բարիք կ'ուզենք , քան թէ անոնց որոնցմէ որ բարիք կը յուսանք :

Ծաղրածութիւնը շատ անգամ մտաց քառութեանէն առաջ կու դայ :

Թէ որ մէկը աղէկ մը քննելու ըլլայ այն անձնքը՝ որոնք որ չեն կրնար զուրիշը գովել , հապա միշտ զուրիշները կը պախարակեն ու մէկէ մ'ալ գոհ չեն , այնպիսին կ'իմանայ որ անոնց վրայ ալ մէկը գոհ չէ :

Մարդուս համար իրեք նշանաւոր գիպուած կայ , ծնանիլ , ապրիլ ու մեռնիլ . կը ծնանի առանց իմանալու , կը մեռնի շատ նեղութիւններ քաշելով , իսկ ապրիլը բոլորովին կը մոռնայ :

Բան մը չկայ որ կարենայ գէշ մարդը մեծ մարդ ընել :

Մէկը ինչուան որ մարդասէր չըլլայ՝ արդար չըլլար չըլլալ :

Մեծ մտածութիւնները պրտէն առաջ կու դան :

ՏՕՄԵՐԱԿԱՆ . Անցեալ յուլիս ամսուն մէջ ըստ նոր տումարի , քիչ անգամ պատահող գիպուած մըն էր , որ 31 օրուան մէջ երկու անգամ ըստոնի լուսում ունեցանիք , մէյմը ամսուն առջի օրը մէյմըն ալ վերջի (1, 31) : Կոյն բանը պիտի հանդիպի գարձեալ 1855ին մայիսի մէջ , 1857ին գեկտեմբերի մէջ , 1860ին օգոստոսի մէջ և այն :